

ԲԱՆԿԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արման Սամվելի Տոնիկյան

Հոդվածը ստացվել է՝ 25.08.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Աշխարհում բանկային համակարգերը կարգավորման, վերահսկողության և կազմակերպվածության առումով առաջատար են տնտեսության մյուս ոլորտների համեմատ: Եթե երկրի տնտեսությունը դիտարկենք՝ որպես օրգանիզմ, ապա դրանում բանկերը կատարում են «արյունատար» համակարգի դեր՝ սնուցելով արտադրության, ծառայությունների, առևտրի և սոցիալական ոլորտները: Պետությունները տնտեսական ու իրավական բարեփոխումների միջոցով փորձում են էլ ավելի ամրապնդել բանկային համակարգը՝ բարձրացնելով բանկայնացման մակարդակը, ինչի արդյունքում ապահովվում է ֆինանսական ռեսուրսների հասանելիություն, դրանց շարժի արագացում, բիզնեսում վերարտադրության գործընթացների անընդհատություն և տնտեսական աճ երկրում:

Տնտեսության մեջ բանկայնացման դերի ու դրա ազդեցության կարևորությամբ, ինչպես նաև «բանկայնացում» տերմինի և այդ գործընթացի վերաբերյալ համակողմանի վերլուծության անհրաժեշտությամբ էլ հիմնավորվում է հոդվածի թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակն է գնահատել Հայաստանում բանկայնացման մակարդակը՝ հաշվի առնելով բանկայնացման գործընթացի վրա ազդող գործոնները: Վերոնշյալ նպատակին համահունչ առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- մեկնաբանել «բանկայնացում» հասկացության էությունը,
- քննարկել բանկայնացման վերաբերյալ տարբեր մոտեցումները,
- ներկայացնել բանկայնացման գնահատման քանակական ցուցանիշները,
- նշել բանկայնացման մակարդակի վրա ազդող գործոնները,
- ուսումնասիրել ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հաճախորդների և նրանց հաշիվների դինամիկան,
- վերլուծել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղային գործունեությունն՝ ըստ տարածաշրջանների,
- հաշվարկել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի խտությունը՝ ըստ ՀՀ մարզերի,
- ներկայացնել ՀՀ առևտրային բանկերից յուրաքանչյուրի մասնաճյուղերի աշխարհագրությունը,
- մեկնաբանել ՀՀ-ում որոշ օրենսդրական փոփոխությունների հետևանքները բանկայնացման գործընթացում,
- առաջարկել ՀՀ-ում բանկայնացման մակարդակի բարձրացման ուղիներ:

Բանկայնացման վերաբերյալ ուսումնասիրությունները քիչ են. տարբեր աշխատություններում այն հիմնականում քննարկվում է ֆինանսական հասանելիության և ֆինանսական ներառման համատեքստում, մասնավորապես՝ դրան

անդրադառնում են երկրների կենտրոնական կամ ազգային բանկերն իրենց ռազմավարական զարգացման ծրագրերում:

Գրականության ակնարկ

Վերջին տարիներին բանկերի դերը և դրանց ազդեցությունը տնտեսական գործընթացներում նկարագրվում է «բանկայնացում» տերմինի միջոցով: Տարբեր մոտեցումներ կան նշված հասկացության մեկնաբանության շուրջ. 2006թ-ին առաջին անգամ տերմինն օգտագործել է Ռուսաստանի բանկերի միության նախագահ Գարեգին Թոսունյանը¹. «Բանկայնացումը երկրի բանկային համակարգի զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված միջոցառումների համալիր է, որը նպատակ ունի հնարավորությունների արդյունավետ օգտագործմամբ բարձրացնել բնակչության բարեկեցության մակարդակը, զարգացնել ազգային կողմնորոշում ունեցող բիզնեսը և նպաստել տնտեսական աճին»²:

Բանկայնացումը դա երկրի բանկային համակարգի զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագիրն է: Գ. Թոսունյանի խոսքով բանկայնացումը ժողովրդավարական հասարակություն ձևավորելու կարևորագույն սոցիալ-տնտեսական ուղղություններից մեկն է:³

Ավելի նեղ իմաստով բանկայնացումը սահմանվում է՝ որպես երկրի բանկային կառուցվածքում առնվազն մեկ հաշիվ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժնի աճ⁴:

Մեկ այլ բնորոշմամբ բանկայնացում է համարվում զարգացող տնտեսություն ունեցող երկրներում բնակչության համար ֆինանսական հասանելիության ապահովումը, այդ թվում՝ հասանելիություն ընթացիկ և խնայողական հաշիվներին, վարկերին, վճարումներին ու փոխանցումներին, ֆինանսական խորհրդատվությանը և այլն⁵:

Եթե ավելի համընդգրկուն քննարկենք բանկայնացման էությունը, ապա կարելի է նշել, որ այն բանկային ծառայություններից օգտվելու քանակական ցուցիչն է, այսինքն՝ որքան ֆիզիկական և իրավաբանական անձ է սպասարկվում բանկային հաշիվներով կամ օգտվում այս կամ այն բանկային ծառայությունից:

Մեթոդաբանություն

Հայաստանում բանկայնացման մակարդակը գնահատելու համար աշխատանքում կիրառվել են մաթեմատիկական բանաձևային հաշվարկների, վիճակագրական շեղումների համեմատության և տրամաբանական դատողությունների վրա հիմնված մեթոդները:

¹ Тосунян Г.А. Энергия финансов преобразит Россию // Национальный банковский журнал. 2006.№ 2. стр. 7

² Тосунян Г.А. Банкизация России: Право, экономика, политика, Олимп-Бизнес, М. 2008, стр. 25-26.

³ Интервью президента Ассоциации российских банков (АРБ) Гарегина Тосуняна, "Голос Армении" (Ереван), 23 сентября, 2006

⁴ Официальный сайт EXDEX "Индекс Обмена Валют": https://www.exdex.ru/useful1_finansy_663/v-rossiyskoy-federatsii-nablyudaetsya-rost-bankizatsii

⁵ Business Ethics: A European Review, Volume 18, Number 4, October 2009, page 353

Միջազգային պրակտիկայում ընդունված է բանկայնացումը գնահատել հետևյալ քանակական ցուցանիշներով՝

- ֆիզիկական և իրավաբանական անձ հաճախորդների թվով,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց բանկային հաշիվների քանակով,
- բանկերի և դրանց մասնաճյուղերի թվով,
- մասնաճյուղերի խտությամբ,
- ֆինանսական միջնորդության ցուցանիշով և այլն:

Թվարկվածներից աշխատանքում հաշվարկվել և վերլուծության են ենթարկվել այն ցուցանիշները, որոնց համար հասանելի են եղել համապատասխան տվյալները:

Վերլուծություն

Այսօր ՀՀ Կենտրոնական բանկը որդեգրել է առաջիկա տարիներին երկրի բանկային համակարգը թվայնացնելու քաղաքականություն, ինչը պահանջում է տնտեսական և իրավական բարեփոխումներ: Թվայնացման ռազմավարության փուլային հաջող իրականացմանը զուգահեռ Հայաստանում կբարձրանա նաև բանկայնացման մակարդակը: Սակայն մինչ այդ պետք է հաշվի առնել, որ գործնականում բանկայնացումը պահանջում է.

- առևտրային բանկերի կապիտալիզացիայի մակարդակի բարձրացում,
- առևտրային բանկերի վերաֆինանսավորման մեխանիզմների կատարելագործում,
- տոկոսադրույքների կրճատում,
- հաճախորդների իրավունքների պաշտպանություն,
- բանկային ակտիվներում ներդրումների (վարկերի և արժեթղթերի տեսքով) մասշտաբների ընդլայնում,
- ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովում տարբեր տարածաշրջաններում,
- տարածքային ենթակառուցվածքների զարգացում,
- բանկային վերահսկողության կատարելագործում,
- որակի կառավարման բարելավում,
- ֆինանսական կրթման ծրագրերի իրականացում և այլն:

Վերոնշյալ միջոցառումներից յուրաքանչյուրը մեկը մյուսի հետ փոխկապված է և փոխլրացնող. կապիտալիզացիայի մակարդակի բարձրացումն ամրապնդում է առևտրային բանկի ֆինանսական կայունությունը, մասնավորապես՝ վճարունակության առումով, ցածր տոկոսադրույքներն ու հաճախորդների իրավունքների պաշտպանությունն ստեղծում են ֆինանսական հասանելիության և ապահովության միջավայր, ներդրումները նպաստում են տարածքային զարգացմանը, վերահսկողության ընթացակարգերն ու որակի կառավարումը «սանձում» են հնարավոր ռիսկերի հետևանքները, իսկ ֆինանսական կրթումն օգնում է սոցիալ-տնտեսական տարբեր խմբերի ներկայացուցիչների ինտեգրմանը բանկային գործընթացներին:

Բանկայնացման մակարդակի վրա ազդող հիմնական գործոններն են.

- երկրում անկանխիկ գործառնությունների կազմակերպման համակարգը,

- հաշիվների բացման և սպասարկման միջնորդավճարները,
- մասնաճյուղերի խտությունը, որը կապված է գյուղաբնակ և քաղաքաբնակ բնակչության գնողունակության հետ,
- բնակչության թիվն՝ ըստ տարածաշրջանների,
- տարածաշրջանի մակերեսը,
- տարածաշրջանում ենթակառուցվածքների զարգացվածության աստիճանը,
- ֆինանսական ծառայությունների գները և այլն:

Անկախ բոլոր նախապայմաններից ու ազդող գործոններից երկրում բանկայնացման մակարդակը բարձրացնելու գործընթացում էական նշանակություն ունի ֆինանսական հասանելիության ու ֆինանսական կրթման ապահովումը: Առաջինը ենթադրում է բանկային շուկայում առաջարկի ու պահանջարկի փոխշահավետ համադրությամբ բանկային ծառայությունների ֆինանսական և տեխնիկական մատչելիություն, իսկ երկրորդը՝ արդյունավետ ֆինանսական որոշումների կայացում և իրավունքների պաշտպանություն:

Առևտրային բանկերի հաճախորդների թվի և նրանց հաշիվների քանակի դինամիկան համարվում է բանկայնացման մակարդակի բնութագրման հիմնական ցուցանիշը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ելակետային և հաշվարկային տվյալներ ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հաճախորդների, նրանց հաշիվների և վերջիններիս հարաբերակցության վերաբերյալ.

Վերջին հինգ տարիների ընթացքում կայուն տեմպերով աճել է թե՛ անհատ, թե՛ իրավաբանական անձ հաճախորդների թիվը, ավելացել են նաև նրանց հաշիվները՝ չնայած 2021 թ-ին նախորդ տարվա համեմատ ֆիզիկական անձանց վարկային հաշիվները կրճատվել են 0.8%-ով, ինչը բացատրվում է Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում տուժած և զոհված վարկառուների/համավարկառուների պարտավորությունների չեղարկմամբ կամ վարկերի դուրսգրմամբ:

Աղյուսակ 1-ի հաշվարկային տվյալները վկայում են, որ միջին հաշվով մեկ անհատը տնօրինում է երկու հաշիվ: Նույնը կարելի է ասել իրավաբանական անձանց մասին:

Բանկայնացման համատեքստում եթե համեմատվում են հաճախորդների վարկային և ավանդային հաշիվների քանակները, ապա նկատվում է, որ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք ֆինանսական ներառման առումով ավելի շատ հակված են ներդրումներ կատարել, քան փոխառություններ վերցնել: Սակայն պետք է հաշվի առնել, որ նշված հետևությունը կատարվում է քանակական վերլուծության պարագայում, իսկ վարկերի ու ավանդների ծավալային ցուցանիշները կարող են այլ պատկեր ձևավորել:

ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հաճախորդների և նրանց հաշիվների դինամիկան¹


Հ/Հ	Ցուցանիշ	31/12/2017	31/12/2018	31/12/2019	31/12/2020	31/12/2021	Հարաբերական շեղումը 2021/2020 (+/- %)
Ելակետային տվյալներ							
1	Ֆիզիկական անձ հաճախորդների թիվը	2,414,389	2,660,149	2,926,922	3,146,319	3,280,756	4.3
2	Իրավաբանական անձ հաճախորդների թիվը	82,100	87,196	98,511	104,962	115,159	9.7
3	<i>Ընդամենը հաճախորդներ</i>	<i>2,496,489</i>	<i>2,747,345</i>	<i>3,025,433</i>	<i>3,251,281</i>	<i>3,395,915</i>	<i>4.4</i>
4	Ֆիզիկական անձանց վարկային հաշիվների քանակը	880,427	1,014,393	1,193,769	1,300,305	1,289,375	-0.8
5	Իրավաբանական անձանց (այդ թվում՝ ԱԶ) վարկային հաշիվների քանակը	22,471	25,587	30,731	32,799	35,209	7.3
6	Ֆիզիկական անձանց բանկային/ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների քանակը	3,562,548	3,970,291	4,520,674	4,734,631	5,139,320	8.5
7	Իրավաբանական անձանց (այդ թվում՝ ԱԶ) բանկային/ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների քանակը	147,785	159,880	187,243	198,209	223,139	12.6
8	<i>Ընդամենը հաշիվներ</i>	<i>4,613,231</i>	<i>5,170,151</i>	<i>5,932,417</i>	<i>6,265,944</i>	<i>6,687,043</i>	<i>6.7</i>
Հաշվարկային տվյալներ							
9	Ֆիզիկական անձանց հաշիվների և նրանց թվի հարաբերակցությունը	1.8	1.9	2.0	1.9	2.0	2.2
10	Իրավաբանական անձանց հաշիվների և նրանց թվի հարաբերակցությունը	2.1	2.1	2.2	2.2	2.2	1.9
11	<i>Բոլոր հաճախորդների հաշիվների և նրանց թվի հարաբերակցությունը</i>	<i>1.8</i>	<i>1.9</i>	<i>2.0</i>	<i>1.9</i>	<i>2.0</i>	<i>2.2</i>

Գործնականում ընդունված է երկրում բանկայնացման մակարդակը գնահատել՝ ելնելով, թե բնակչության քանի տոկոսն է սպասարկվում բանկերում: Սակայն այդ ցուցանիշի իրատեսական հաշվարկը կատարելիս պետք է հաշվի առնել ոչ թե 16-65 տարեկան բոլոր քաղաքացիներին, այլ՝ այդ տարիքային խմբում գործունակ համարվողներին (ՀՀ-ում՝ մոտ 40%): Բայց այս խնդիրը դեռ լուծված չէ, քանի որ բանկային համակարգում հաճախորդների նույնականացման միասնական համակարգ չկա. նույն անձը տարբեր բանկերում օգտվում է տարբեր ծառայություններից, ունի տարբեր հաշիվներ, ինչը թույլ չի տալիս որոշել զուտ հաճախորդների թիվը, ըստ որի էլ՝ բանկայնացման իրական մակարդակը:

Բանկայնացումը նկարագրող հաջորդ ցուցանիշը դիտարկվում է առևտրային բանկերի տարածքային ստորաբաժանումների, մասնավորապես՝ մասնաճյուղերի քարտեզում:

ՀՀ-ում գործող 17 առևտրային բանկերից շատերն ունեն բավական լայն մասնաճյուղային ցանց, դրանց ընդհանուր թիվն անցնում է 550-ից.

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ պաշտոնական գրավոր հարցման արդյունքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տվյալների հիման վրա



Գծապատկեր 1. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի թվի դինամիկան¹

Գծապատկերում երևում է, որ ՀՀ բանկային շուկայում գործող բանկերի մասնաճյուղերի թիվը 2021թ-ին 2020թ-ի համեմատ նվազել է 6-ով, ինչը կրկին բացատրվում է Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով Ադրբեջանին անցած տարածքներում գործող մասնաճյուղերի գործունեության դադարեցմամբ: Նկատվում է նաև, որ մասնաճյուղերի քանակի բաշխվածությունը Երևանում և ՀՀ մարզերում համաչափ է, ինչ թույլ է տալիս պնդել, որ բանկայնացումը մայրաքաղաքում բավականին բարձր է:

Բացի մասնաճյուղերից, բանկայնացման մակարդակի վրա անուղղակի ազդեցություն կարող են ունենալ նաև բանկերի ներկայացուցչությունները, որոնք նպատակային գործունեություն են իրականացնում օտարերկրյա ներդրումների ներգրավման և բանկային համակարգի միջազգայնացման համար: ՀՀ առևտրային բանկերից «Հայֆինանս» ՓԲԸ-ն Լիբանանում, «Յունիբանկ» ԲԲԸ-ն Մոսկվայում և «Արդշինբանկ» ՓԲԸ-ն Փարիզում ունեն մեկական ներկայացուցչություն:

Շարունակելով Հայաստանում բանկայնացման քննարկումն բանկերի տարածքային ստորաբաժանումների գործունեության տեսանկյունից՝ նպատակային կլինի անդրադառնալ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի խտությանը.

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ պաշտոնական գրավոր հարցման արդյունքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տվյալների հիման վրա

ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի խտությունը՝ ըստ տարածաշրջանների¹

Տարածաշրջան	Մշտական բնակչության թիվը (մարդ)	Տարածքը (ք.կմ)	Մասնաճյուղերի ընդհանուր թիվը	Մասնաճյուղերի թիվը 10,000 շնչի հաշվով	Մասնաճյուղերի թիվը 100 ք.կմ հաշվով
Երևան	1,092,100	223	258	2.4	115.7
Արագածոտն	125,000	2,756	23	1.8	0.8
Արարատ	257,300	2,090	23	0.9	1.1
Արմավիր	265,200	1,231	26	1.0	2.1
Գեղարքունիք	227,700	5,352	28	1.2	0.5
Լոռի	211,300	3,799	37	1.8	1.0
Կոտայք	251,800	2,092	42	1.7	2.0
Շիրակ	230,000	2,680	36	1.6	1.3
Սյունիք	134,500	4,506	28	2.1	0.6
Վայոց Ձոր	48,100	2,310	11	2.3	0.5
Տավուշ	119,500	2,704	23	1.9	0.9
Արցախ*	148,000	12,000	18	1.2	0.2
Հայաստան	2,963,000	29,743	553	1.9	1.9

Ելնելով Աղյուսակ 2-ի տվյալներից՝ կարելի է նշել, որ ՀՀ մարզերում ամենաշատ «բանկային ներկայացվածությունն» ապահովված է Լոռիում և Շիրակում, իսկ ամենաքիչ մասնաճյուղերը գրանցված են Վայոց Ձորում, ինչը պայմանավորված է մշտական բնակչության փոքր թվով:

Մասնաճյուղերի խտությունն՝ ըստ բնակչության, համեմատաբար մեծ է Երևանում, Սյունիքում և Վայոց Ձորում. 10,000 շնչին ընկնում է 2-ից ավելի մասնաճյուղ, իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արարատի մարզում՝ 0.9:

Ըստ տարածքի՝ մասնաճյուղերի խտության ցուցանիշը բավականին ուշագրավ է Երևանում. 100 կմ² տարածքում գործում է մոտ 116 մասնաճյուղ: Հայաստանի մարզերում ամենացածր ցուցանիշները դիտվում են Վայոց Ձորում և Գեղարքունիքում, ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ վերջինը նշված մարզում Սևանա լճի հայելու մակերեսը կազմում է 1,260 կմ², այսինքն՝ զուտ ցամաքային տարածքի դեպքում մասնաճյուղերի խտության ցուցանիշը 0.5-ից կբարձրանա 0.7: Ուսումնասիրվող տարածաշրջաններում ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արցախում (0.2), ինչը կարելի է պայմանավորել քաղաքական և տնտեսական

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք-էջի (www.armstat.am) Տարածքային վիճակագրության բաժնում և Արցախի Հանրապետության Սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարության պաշտոնական կայք-էջում (<http://mss.nkr.am>) հրապարակված տվյալների հիման վրա

զարգացումների, մասնավորապես՝ պատերազմական իրադրության և ենթակառուցվածքների թերզարգացվածության հետ:

Քննարկելով բանկայնացման մակարդակն առևտրային բանկերի տարածքային ստորաբաժանումների թվաքանակի վերլուծության շրջանակում՝ շուկայավարման և ֆինանսական հասանելիության տեսանկյունից հետաքրքրական է ներկայացնել ՀՀ տարածքում գործող 17 առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցի աշխարհագրությունը.

Աղյուսակ 3

ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի մարզային բաշխվածությունը¹

Հ/Հ	Առևտրային բանկ	Մասնաճյուղերի թիվը՝ ըստ մարզերի												Ընդամենը
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Արցախ	
1	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	19	5	4	4	5	5	5	6	4	2	4	0	63
2	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	14	1	0	1	0	1	2	1	2	1	1	0	24
3	«Այդի Բանկ» ՓԲԸ	9	0	0	1	0	1	1	1	0	0	0	0	13
4	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	22	1	2	2	2	4	5	4	3	0	4	0	49
5	«Արդշինբանկ» ՓԲԸ	20	3	5	3	4	6	6	4	5	2	4	0	62
6	«Արմսիվիսբանկ» ՓԲԸ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1
7	«Արցախբանկ» ՓԲԸ	8	0	0	0	0	0	0	0	0	0	0	10	18
8	«ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ	4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	4
9	«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	5	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	5
10	«ԷՎԿԱԲԱՆԿ» ՓԲԸ	10	0	0	0	0	1	1	1	0	0	0	0	13
11	«Ինտերբանկ» ՓԲԸ	17	1	1	1	0	2	1	1	0	0	0	0	24
12	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	16	1	1	3	1	1	5	3	1	0	2	1	35
13	«ՀԱՅԲԻՋՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	26	3	2	2	4	3	3	4	3	0	2	4	56
14	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	29	1	2	2	3	3	5	2	2	1	1	1	52
15	«Մելլաթ Բանկ» ՓԲԸ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1
16	«Յունիբանկ» ԲԲԸ	32	2	2	2	3	4	2	2	3	1	1	2	57
17	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	28	4	3	4	5	5	5	7	5	3	4	0	73
	Ընդամենը	261	22	22	25	27	36	41	36	28	10	23	18	550

Հայաստանում ամենաշատ մասնաճյուղերն ունի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, որն ավելի շատ կենտրոնացած է Երևանում և Շիրակի մարզում: Մասնաճյուղերի թվով երկրորդը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն է, իսկ երրորդը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն: Մասնաճյուղերի քիչ թվով առանձնանում են «Արմսիվիսբանկ» ՓԲԸ-ն, «Մելլաթ Բանկ» ՓԲԸ-ն, «ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ-ն և «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն:

Երևանում մասնաճյուղերի թվով առաջատար է «Յունիբանկ» ԲԲԸ-ն, Արագածոտնում՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, Արարատում՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, Արմավիրում և Գեղարքունիքում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ու «ԱԿԲԱ ԲԱՆԿ»

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի պաշտոնական կայք-էջերում 30.06.2022թ. դրությամբ հրապարակված տվյալների հիման վրա

ԲԲԸ-ն, Լոռիում և Կոտայքում՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, Շիրակում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, Սյունիքում՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, Վայոց Ձորում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, Տավուշում՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «Արդշինբանկ» ՓԲԸ-ն և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն:

17 առևտրային բանկից Արցախում մասնաճյուղեր ունեն 5-ը, ընդ որում՝ ամենաշատը՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ն, իսկ մեկական՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ու «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Բացի Երևանից, ըստ մասնաճյուղերի թվի՝ ՀՀ-ում բանկայնացման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Կոտայքի մարզում՝ 41 մասնաճյուղ, իսկ ամենացածրը՝ Վայոց Ձորում՝ 10 մասնաճյուղ:

50-ից ավելի մասնաճյուղեր ունեցող ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերն իրենց գործունեությամբ բանկայնացմանը նպաստում են առավելապես Շիրակի, Լոռվա, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցի զարգացման, հետևապես ռեզիդենտ բանկայնացման գործընթացում պետք է ուշադրություն դարձնել նաև օրենսդրական փոփոխություններին. այսօր բանկի և բանկի յուրաքանչյուր մասնաճյուղի գործունեության համար տարեկան միանվագ պետական տուրքի չափերը համապատասխանաբար կազմում են 8 մլն դրամ և 1 մլն դրամ¹, ինչը բավականին բարձր դրույք է և խոշոր ոչ տոկոսային ծախս է առաջացնում հատկապես մեծ թվով մասնաճյուղեր ունեցող առևտրային բանկերի համար: Օրինակ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն բացի գլխամասային գրասենյակի գործունեության համար տարեկան միանվագ վճարվող 8 մլն դրամ պետական տուրքից, բոլոր մասնաճյուղերի գործունեության համար տարեկան միանվագ վճարում է նաև 72 մլն դրամ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն՝ 62 մլն դրամ, իսկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն՝ 61 մլն դրամ:

Պետական տուրքի գծով նման ծախսերը կարող են խոչընդոտել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի աշխարհագրության ընդլայնման միջոցով բանկայնացման մակարդակի բարձրացման գործընթացին, ընդ որում՝ պետական տուրքի չափի որոշման համար սահմանված դրույքաչափի հիմնավորումը բացակայում է:

Հայաստանում բանկայնացման մակարդակի աճին նպաստում են նաև «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, մասնավորապես այն, որ 01.07.2022թ-ից ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 300 հազար դրամը գերազանցող բոլոր գործարքներն իրականացվում են միայն անկանխիկ եղանակով², և օրենսդրական փոփոխություններն առաջիկա տարիներին էլ ավելի են մեծացնելու անկանխիկ վճարումների մասշտաբները:

¹ Աղբյուրը՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, 19-րդ հոդված, 5-րդ կետ

² «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, 1-ին կետ

Եզրակացություն

Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների, հաշվարկների և վերլուծությունների վրա՝ Հայաստանում բանկայնացման վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

- բանկայնացումը պահանջում է բանկային համակարգի զարգացման այնպիսի ձևաչափ, որը կավելացնի բանկային ծառայությունների պահանջարկը,

- բանկայնացման մակարդակի աճը ավելացնում է ֆինանսական ռեսուրսներին հասանելիության հնարավորությունները, ինչն էլ անհատներին ու բիզնեսի ներկայացուցիչներին դարձնում է տնտեսապես ավելի անկախ, մրցակցային և սոցիալապես պատասխանատու,

- ֆինանսական ծառայությունների մատուցման ժամանակի, տեղանքի և գնի արդյունավետ որոշումն ու համադրումը բանկայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմնաքարերից են,

- բանկի և դրա մասնաճյուղ(եր)ի գործունեության համար պետական տուրքի դրույթաչափերը չհիմնավորված բարձր են, ինչը բանկերի տարածքային զարգացման միջոցով բանկայնացման մակարդակի բարձրացման համար խոչընդոտ է, հետևապես՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը պետք է Հայաստանի բանկերի միության աջակցությամբ հանդես գան օրենսդրական փոփոխությունների կատարելու նախաձեռնությամբ՝ առաջարկելով սահմանել պետական դրույքի շեմեր՝ ելնելով բանկի մասնաճյուղերի թվից,

- Հայաստանում օրենսդրական փոփոխություններով խթանվում է անկանխիկ գործառնությունների կազմակերպումը, ինչն իր հերթին մեծացնում և շարունակելու է մեծացնել բանկայնացման շրջանակը,

- բանկայնացումը ենթադրում է տարածքային և ֆինանսական հասանելիություն հաճախորդների տարբեր խմբերի համար, իսկ ֆինանսական տեխնոլոգիաները նպաստում են հեռավար սպասարկմանը, ուստի առևտրային բանկերը պետք է անընդհատ իրագործեն ֆինանսական նորարարություններ թվայնացման և թվային փոխակերպման միջոցով,

- Հայաստանում բանկայնացման մակարդակը բարձր է մայրաքաղաքում, իսկ մարզերում՝ միայն քաղաքային բնակավայրերում, քանի որ գյուղական համայնքներում ենթակառուցվածքները զարգացած չեն,

- երկրում բանկայնացման իրատեսական մակարդակը որոշելու համար առկա է խնդիր՝ կապված հաճախորդների նույնականացման կամ բանկային հաշիվների քանակի հաշվարկում հաճախորդի կրկնակի գրանցման բացառման հետ: Այս դեպքում ՀՀ Կենտրոնական բանկը պետք է օգտագործի իր կողմից կառավարվող հաշիվների ռեգիստրի տվյալները: Իսկ առևտրային բանկերը, հատկապես՝ խոշոր 5-յակից դուրս գործողները, չեն տրամադրում հաճախորդների նույնականացման տվյալներ մրցակցության և շահերի բախման պատճառով,

- բանկայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպման և դրա մակարդակի բարձրացման համար կարևոր նշանակություն ունի ֆինանսական կրթումը, ուստի առևտրային բանկերն իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում պետք է հաճախորդների տարբեր խմբերի

համար իրականացնեն ուղղորդող, խորհրդատվական, ուսուցողական և ճանաչողական կրթական ծրագրեր:

Հիմնվելով կատարված աշխատանքի հիմնական դրույթների և վերլուծությունների վրա՝ որպես գիտական նորույթ կարելի է առանձնացնել այն, որ աշխատանքում ներկայացվել է բանկայնացման համընդգրկուն սահմանում՝ բացահայտելով դրա իրատեսական մակարդակի գնահատման հնարավորությունը:

Այսպիսով, Հայաստանում բանկայնացման մակարդակը տարիների ընթացքում գնալով աճում է և ներկա թվայնացման ժամանակաշրջանում բանկերն իրենց կառուցվածքում ստեղծում են նոր ստորաբաժանումներ, որոնք ֆինանսական տեխնոլոգիաների կիրառմամբ մեծացնում են ֆինանսական հասանելիությունը ժամանակի և տարածության մեջ՝ բանկային ծառայությունները մատչելի դարձնելով հասարակության լայն շերտերի համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք (ընդունման ամսաթիվը՝ 18.01.2022)
2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (ընդունման ամսաթիվը՝ 27.12.1997)
3. Тосунян Г.А. Банкизация России: Право, экономика, политика, Олимп-Бизнес, М. 2008 - 400 с.
4. Тосунян Г.А. Энергия финансов преобразит Россию // Национальный банковский журнал. № 2. 2006
5. Интервью президента Ассоциации российских банков (АРБ) Гарегина Тосуняна, "Голос Армении" (Ереван), 23 сентября, 2006
6. Business Ethics: A European Review, Volume 18, Number 4, October 2009, 478 pages
7. Արցախի Հանրապետության Սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարության պաշտոնական կայք-էջ՝ <http://mss.nkr.am>
8. ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք-էջ՝ www.cbs.am
9. ՀՀ Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք-էջ՝ www.armstat.am
10. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի պաշտոնական կայք-էջեր
11. Официальный сайт EXDEX "Индекс Обмена Валют": www.exdex.ru

References

1. «Ankanxik gorc'ar'nut'yunneri masin» HH o'renq (y'ndunvan amsat'ivy': 18.01.2022)
2. «Petakan turqi masin» HH o'renq (y'ndownman amsat'ivy'` 27.12.1997)
3. Tosunjan G.A. Bankizacija Rossii: Pravo, jekonomika, politika, Olimp-Biznes, M. 2008 - 400 c.
4. Tosunjan G.A. Jenergija finansov preobrazit Rossiju // Nacional'nyj bankovskij zhurnal. # 2. 2006
5. Interv'ju prezidenta Associacii rossijskih bankov (ARB) Garegina Tosunjana, "Golos Armenii" (Erevan), 23 sentjabrja, 2006
6. Business Ethics: A European Review, Volume 18, Number 4, October 2009, 478 pages

7. Arcaxi Hanrapetut'yan Socialakan zargacman ev migraciayi naxararut'yan pashtonakan kayq-e'j: <http://mss.nkr.am>
8. HH Kentronakan banki pashtonakan kayq-e'j: www.cbs.am
9. HH Vitwakagrakan komitei pashtonakan kayq-e'j: www.armstat.am
10. HH tarac'qum gorc'ogh ar'evtrayin bankeri pashtonakan kayq-e'jer
11. Oficial'nyj sajт EXDEX "Indeks Obmena Valjut": www.exdex.ru

ԲԱՆԿԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արման Սամվելի Տոնիկյան

Համառոտագիր: Բանկայնացման ուսումնասիրության կարևորությունը հիմնավորվում է նրանով, որ բանկերն առանցքային նշանակություն ունեն տնտեսության կայուն զարգացման և հասարակության բարեկեցության համար, ուստի հոդվածում նպատակ է դրվել գնահատել բանկայնացման մակարդակը Հայաստանում:

Հետազոտության նպատակից բխող խնդիրների շրջանակում հոդվածում մեկնաբանվել է բանկայնացման էությունը, առանձնացվել են բանկայնացման մակարդակի վրա ազդող գործոններն ու բանկայնացմանը ներկայացվող պահանջները, ուսումնասիրվել է ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հաճախորդների և նրանց հաշիվների դինամիկան, վերլուծվել է առևտրային բանկերի մասնաճյուղային գործունեությունն՝ ըստ տարածաշրջանների, հաշվարկվել է մասնաճյուղերի խտությունն՝ ըստ մարզերի, մեկնաբանվել են որոշ օրենսդրական փոփոխությունների հետևանքները բանկայնացման գործընթացում, ինչպես նաև ներկայացվել են ՀՀ-ում բանկայնացման մակարդակի բարձրացման հնարավորությունները:

Հետազոտության համար աշխատանքում կիրառվել են մաթեմատիկական բանաձևային հաշվարկների, վիճակագրական շեղումների համեմատության և տրամաբանական դատողությունների վրա հիմնված մեթոդները:

Հոդվածի վերջում առանձնացվել են կիրառական առաջարկություններ Հայաստանում բանկայնացմանը նպաստող օրենսդրական փոփոխությունների, ֆինանսական նորարարությունների, բանկերի հաճախորդների նույնականացման և ֆինանսական կրթման (գրագիտության) վերաբերյալ:

Բանալի բառեր. բանկայնացում, բանկայնացման մակարդակ, բանկային համակարգ, առևտրային բանկեր, մասնաճյուղեր, հաճախորդներ, բանկային հաշիվներ, ֆինանսական հասանելիություն

БАНКИЗАЦИЯ В АРМЕНИИ

Арман Самвелович Тоникян

Аннотация. Важность изучения банкизации обосновывается тем, что банки имеют ключевое значение для стабильного развития экономики и благосостояния общества, следовательно в статье была поставлена цель оценить уровень банкизации в Армении.

В рамках задач, вытекающих из цели исследования, в статье была истолкована сущность банкизации, выделены факторы, влияющие на уровень банкизации, и требования к банкизации, изучена динамика клиентов коммерческих банков действующих в РА и их счетов, проанализирована филиальная деятельность коммерческих банков по регионам, рассчитана плотность филиалов по марзам, интерпретированы последствия некоторых законодательных изменений в процессе банкизации, а также представлены возможности повышения уровня банкизации в РА.

Для исследования в работе использовались методы, основанные на расчетах по математическим формулам, сравнении статистических отклонений и логическом обосновании.

В конце статьи были выделены практические рекомендации относительно законодательных изменений, финансовых инноваций, идентификации клиентов банка и финансового образования (грамотности), способствующих банкизации в Армении.

Ключевые слова: банкизация, уровень банкизации, банковская система, коммерческие банки, филиалы, клиенты, банковские счета, финансовая доступность

BANKIZATION IN ARMENIA

Arman Samvel Tonikyan

Abstract. The importance of studying bankization is substantiated by the fact that banks are of key importance for the stable development of the economy and the welfare of society, therefore, the aim of the article was to assess the level of bankization in Armenia.

Within the framework of the tasks arising from the purpose of the study, the article interpreted the essence of bankization, highlighted the factors affecting the level of bankization, and the requirements for bankization. The dynamics of clients of commercial banks operating in the Republic of Armenia and their accounts were studied, the branch activity of commercial banks by region was analyzed, the density of branches by region was calculated, the consequences of some legislative changes in the bankization process were commented on, and the possibilities of increasing the level of banking activity in the Republic of Armenia were presented.

The methods based on mathematical formula calculations, comparison of statistical deviations and logical reasoning were used in the article.

Pactical recommendations were highlighted regarding legislative changes, financial innovations, identification of bank customers and financial education (literacy) that promote bankization in Armenia.

Keywords: bankization, level of bankization, banking system, commercial banks, branch, customers, bank accounts, financial accessibility